ՆԵՐԿՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼ Է ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՕՄԲՈՒՂՍՄԵՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԿԱՄ ՆՄԱՆԱՏԻՊ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ




ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝

Ներդրումային օմբուդսմենի գրասենյակ կամ նմանատիպ որևէ հաստատություն չի ստեղծվել երկրում:

3 ՀՀ արդարադատության նախարարությունը առաջարկվող բարելավման 12 և 22 ոլորտների վերաբերյալ ներկայացրել է մեկնաբանություն՝ հղում կատարելով ՀՀ սահմանադրությանը, որը սահմանում է դրույթներ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի վերաբերյալ: ՀՀ Սահմանադրությունը սահմանում է երաշխիքներ և նշում, որ ցանկացած անձ կարող է դիմել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ՝ իրենց իրավունքների խախտման դեպքում: Ձեռնարկատիրությունների իրավունքների պաշտպանության մասին ուղղակիորեն չի նշվում «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքում, սակայն այն սահմանում է, որ իրավաբանական անձինք իրավունք ունեն Օմբուդսմենին դիմելու:

ՀԾԿՀ-Ն ԻՐԱՎԱՍՈՒ Է ԼԻՆԵԼՈՒ ՏՆՕՐԻՆԵԼ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ, ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼՈՒ Է ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻՑ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ: ՀԾԿՀ-Ն ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ԼԻՆԵԼՈՒ ԻՐ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ՆՐԱ ԾԱԽՍԵՐԸ ՍՏՈՒԳՎԵԼՈՒ ՈՒ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒ ԵՆ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ




ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝

ՀԾԿՀ-ի բյուջետային հատկացումները կարգավորվում են 2003թ. դեկտեմբերի 25-ին ընդունված՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» թիվ ՀՕ-18-Ն և 1997թ. հունիսի 24-ին ընդունված՝ «Բյուջետային համակարգի մասին» թիվ ՀՕ-137 օրենքներով: Նշված իրավական ակտերի համաձայն՝ ՀԾԿՀ-ի ֆինանսավորումը ձևավորվում է ամեն տարի, և նրա մի մասը կազմում են ՀՀ պետական բյուջեից կատարվող հատկացումները: Բյուջեով նախատեսվում են որոշ ծախսեր/ հոդվածներ, որոնք կարգավորող մարմինը ապահովում է ինքնուրույն:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի Հոդված 19-ի համաձայն ՀՀ կառավարությունը կարող է անցկացնել ֆինանսական աուդիտ՝ հաշվետվության հավաստիությունը ճշտելու նպատակով:

Հանձնաժողովի անկախ բյուջեն բխում է կարգավորող մարմնին իրավական և գործնական գործիքների ապահովման անհրաժեշտությունից, որը թույլ կտա նրան գործել առավել արդյունավետ: Սա ամրագրվել է ՀՀ փոխվարչապետին ներկայացված՝ հանրային ծառայությունները կարգավորող մեխանիզմների բարեփոխումների ծրագրում:

ՀԾԿՀ-Ի ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԲԱՐԵԼԱՎԿԵԼ Է, ԵՎ ԱՐՅՈՒՆՔՈՒՄ ԲԱՐՁՐԱՅԵԼ Է ՀԾԿՀ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ




ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝

2003թ. դեկտեմբերի 25-ին ընդունված՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմին մասին» թիվ ՀՕ-18-Ն օրենքը ներառում է ՀԾԿՀ-ի կառավարման հաշվետվողականությունն ու թափանցիկությունն ապահովող դրույթներ, ներառյալ՝

- Հոդված 9-ը վերաբերվում է Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի իրավունքների սահմանափակմանը (այդ թվում օրինակ՝ Հանձնաժողովի անդամը չի կարող լինել ներկայացուցչական որևէ կառույցի անդամ կամ կատարել վճարովի այլ աշխատանք):
- Նույն հոդվածի դրույթներով սահմանվում են կարգավորվող կազմակերպություններում բաժնեմաս և արժեթղթեր ունենալու վերաբերյալ սահմանափակումներ: Իրենց լիազորությունների վաղաժամկետ դադարեցվելու դեպքում Հանձնաժողովի անդամները չեն կարող աշխատել կարգավորվող ոլորտում, իսկ աշխատակազմի աշխատակիցները չեն կարող կատարել վճարովի աշխատանք կարգավորվող կազմակերպությունների համար:
- Հոդված 14-ը սահմանում է, որ յուրաքանչյուր տարի՝ մինչև հոկտեմբերի 1-ը, ՀԾԿՀ-ն ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում հաջորդ տարվա իր գործունեության ծրագիրը: Նույն հոդվածի համաձայն յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը Հանձնաժողովը հրապարակում է նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը:
- Օրենքի 19-րդ հոդվածով նախատեսվում է, որ Հանձնաժողովը տարեկան ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում ՀՀ կառավարության լիազորած մարմին, իսկ վերջինս, այդ հաշվետվության հավաստիության ճշտման նպատակով, կարող է անցկացնել հանձնաժողովի ֆինանսական գործունեության աուդիտ:

Ըստ ՀԾԿՀ-ի, Հանձնաժողովի անդամների վերանշանակման սահմանափակումներ սահմանելիս հաշվի է առնվել միջազգային առաջատար փորձը: Այսպիսով, Հանձնաժողովի դիրքորոշման համաձայն օրենքի համապատասխան դրույթներն ավելի լավ են ապահովում նրա անկախությունը:

ՀՍՏԱԿ ՍԱՀՄԱՆՎԵԼ Է ՇԱՀԱԳՐԳԻՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՎՈՐՈՂԻ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝

2003թ. դեկտեմբերի 25-ին ընդունված՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» թիվ ՀՕ-18-Ն օրենքով նախատեսվում է, որ Հանձնաժողովն իր սահմանած կարգի համաձայն հայտարարում է նիստերի անցկացման տեղը և ժամանակը, հնարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց և հասարակության ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, ստանալ օրակարգը և քննարկվող նյութերը, ներկայացնել տեղեկություններ և հանդես գալ ելույթներով:


ՀԾԿՀ-ն հայտարարում է առաջիկա նիստերի մասին պաշտոնական կայքի հատուկ բաժնում <http://psrc.am>: Հայտարարությունը ներառում է տեղեկատվություն վայրի և ամսաթվի մասին, ինչպես նաև օրակարգը, յուրաքանչյուր կետի վերաբերյալ եզրակացության/ որոշման նախագիծը և հիմնավորող փաստաթղթերը:

**ԲՅՈՒՐՈՎՐԱՏԱԿԱՆ ԽՈԶՆԴՈՏՆԵՐԸ
ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ
ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ ԱԶԱԿՅԵԼՈՒ
ԵՎ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

ԱՐՁԱՆԱԳՐՎԱՃ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝

Համաշխարհային բանկի «Doing Business 2020»-ի վարկանիշում Հայաստանը զբաղեցնում է 47-րդ հորիզոնականը («Doing Business 2019»-ի համեմատ 6 կետով նվազել է), «Սկսել բիզնես» կատեգորիայում ամենաբարձր՝ 10-րդ դիրքում (2019թ.-ի համեմատ 2 կետով նվազել է) և ամենացածր՝ 120-րդ դիրքում փոքր ներդրողների պաշտպանության կատեգորիայում:


ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 8-ի
 Նիստի թիվ 45 արձանագրության քաղվածքի
 համաձայն՝ ՀՀ կառավարությունը հավանություն
 է տվել Հայաստանի Հանրապետության
 ներդրումային քաղաքականության
 հայեցակարգին և գործողությունների ծրագրին:
 Նշված քաղաքականությամբ նախատեսվում
 է օտարերկրյա և տեղական ներդրումների
 ներգրավում, ներառյալ՝ դրանց համար
 լրացուցիչ խթաններ ստեղծելու միջոցով:
 Քաղաքականության 3-րդ Հոդվածը նվիրված
 է համապատասխան բարեփոխումների
 իրականացմանը: Մասնավորապես, 3.3 կետը
 վերաբերվում է ներդրումների խթանմանը:
 Միևնույն ժամանակ, Գործողությունների ծրագրի
 2-րդ կետով նախատեսվում է ներդրումների
 ներգրավման և խրախուսման ռազմավարության
 մշակում մինչև 2020թ. դեկտեմբեր: Ներդրումների
 աջակցման նոր կազմավորված կենտրոնը ներդրել
 է «մեկ պատուհան» ծառայությունը տեղական և
 օտարերկրյա հնարավոր ներդրողների համար:



ՀԾԿՀ-ն պարբերաբար վերանայում է Էներգետիկ ոլորտում գործունեության լիցենզավորման կարգը և համաձայնագրերի օրինակելի ձևերը՝ սույն գործընթացի պարզեցման և կանոնակարգի թափանցիկության ապահովման նպատակով: Հանձնաժողովի 2017թ. նոյեմբերի 1-ի թիվ 462-Ն որոշմամբ կանոնակարգվում է Հանձնաժողովի նիստերի հրավիրման և անցկացման կարգը, որն ուղղված է որոշումների ընդունման գործընթացում թափանցիկության մակարդակի բարձրացման ու հանրային խորհրդակցությունների անցկացմանը:

««Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» վերջերս ընդունված օրենքով (2018թ. փետրվարի 7-ին ընդունված թիվ ՀՕ-100-Ն օրենք) հանվել է որոշ տնտեսական գործունեության, այդ թվում Էլեկտրական Էներգիայի ներկրման և արտահանման լիցենզավորման անհրաժեշտությունը:

ՕՐԵՆՍՐՈՒԹՅԱՆ Ա ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԵՎ ՀՍՏԱԿ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ




ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆ՝

2018թ. մարտի 21-ին ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» թիվ ՀՕ-180-Ն ՀՀ օրենքում առկա են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին վերաբերող օրենսդրական տեխնիկայի, նորմատիվ իրավական ակտի կառուցվածքի, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը դադարեցնելու, ժամկետների հաշվարկման վերաբերյալ դրույթներ, որոնց գործողությունը տարածվում է անհատական և ներքին իրավական ակտերի վրա, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ այն նորմատիվ իրավական ակտով, որով նախատեսվել է անհատական կամ ներքին իրավական ակտի ընդունում:

² ՀՀ արդարադատության նախարարությունը մեկնաբանակել է, որ ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան նորմատիվ ակտերին հղումները ներկայացվել են ԷՆՌԳ-ի նախորդ տարիներին տրամադրված հարցաշարերին ի պատասխան: Նախարարությունը խնդրել է նաև թվարկել այս ոլորտում առկա այն զարգացումներ, որոնց հիման վրա նման եզրահանգում էր արվել ԷՆՌԳ-ի 2017թ. հրապարակված զեկույցում:

ՕՏԱՐ ԼԵՋՈՒՆԵՐՈՎ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐԱԼԱՎՈՒՄ



ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝

ՀՀ կառավարության 1996թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» պաշտոնական պարբերական հիմնելու մասին» թիվ 396 որոշումը կարգավորում է ընդունված օրենքների և կանոնակարգերի պաշտոնական հրապարակման գործընթացը:


2018թ. մարտի 21-ին ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» թիվ ՀՕ-180-Ն ՀՀ օրենքի Հոդված 25-ի համաձայն՝ մինչև 2019թ. հուլիսի 1-ն ընդունված նորմատիվ իրավական ակտերը հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» (տպագիր) և ակտերի հրապարակման միասնական կայքում (Էլեկտրոնային տարբերակով): Այս օրենքով սահմանվում է, որ բոլոր նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումը պետք է իրականացվի միասնական կայքում: Այս հոդվածը ուժի մեջ է մտել 2019թ. հուլիսի 1-ից:

Ընդունված իրավական ակտերը, ինչպես նաև դրանց նախագծերը հրապարակվում են նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտոնական կայքում (www.parliament.am), Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի (www.arlis.am / www.laws.am / www.legislation.am) և այլ աղբյուրների (www.irtek.am, www.gov.am, www.e-gov.am) կայքերում: Նախագծերը և ընդունված ակտերը հանրությանը հասանելի են առցանց՝ համապատասխան պետական մարմինների պաշտոնական կայքերի միջոցով: Իրավական ակտերի նախագծերը հրապարակվում են ՀՀ արդարադատության նախարարության կողմից համակարգվող հատուկ կայքում (www.e-draft.am):

Իրավական ակտերի պաշտոնական թարգմանությունը կատարվում է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 22-ի թիվ 167-Ն որոշմամբ: Համապատասխան գերատեսչությունները կարող են դիմել կենտրոն թարգմանություն իրականացնելու նպատակով ելնելով դրանց անհրաժեշտությունից և հրատապությունից: Թարգմանված փաստաթղթերը հասանելի են կենտրոնի կայքում www.translation-centre.am:

Թարգմանվող իրավական ակտերի թիվը սահմանափակ է: Երբեմն թարգմանության համար իրավական ակտերի ընտրության որոշումները կախված են ֆինանսական միջոցների առկայությունից կամ օտարերկրյա/ միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությունից:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ




ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝

2018թ. մարտի 21-ին ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» թիվ ՀՕ-180-Ն ՀՀ օրենքի Հոդված 3-ը ներառում է օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ պարտադիր հանրային քննարկումներ (լուումներ) և օրենսդրության նախագծի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ ոչ պարտադիր քննարկումներ անցկացնելու մասին դրույթներ:

Այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ քննարկում կարող է նախաձեռնել օրինագիծ մշակողը կամ ակտն ընդունող մարմինը:

ՀՀ կառավարության 2018թ. հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» թիվ 1146-Ն որոշմամբ կարգավորվում է հանրային քննարկումների (լուումների) գործընթացն ու ընթացակարգը: Մասնավորապես, վերը նշված կանոնակարգերի համաձայն, նախագծի կազմման համար պատասխանատու հաստատությունները կազմակերպում են փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ հանրային խորհրդակցություններ (լուումներ), որոնց նպատակն է տեղեկացնել ֆիզիկական և իրավաբանական անձանց նորմատիվ իրավական ակտի նախագծի մասին, լսել և հաշվի առնել նրանց կարծիքները:

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԿԱՄ ՄԱՐՄՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ



ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝

ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 667-Ն որոշումը ներառում է տարբեր հանձնաժողովների, այդ թվում՝ Նախարարական հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ դրույթ, որը թույլ է տալիս առավել արդյունավետ համակարգել կառավարության կողմից որոշումների կայացման գործընթացը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1654-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ Էներգետիկայի ոլորտում ներդրումային ծրագրերի ուսումնասիրության նպատակով: Նախատեսվում է նաև, որ խումբը կներկայացնի այդպիսի ծրագրերի իրականացմանը խոչընդոտող գործոնների վերացմանն ուղղված առաջարկություններ (այդ թվում օրենսդրական դաշտի կատարելագործման, գոյություն ունեցող նորմատիվային-տեխնիկական փաստաթղթերը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ):

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» 2003թ. դեկտեմբերի 25-ին ընդունված թիվ ՀՕ-18-Ն օրենքի 13-րդ հոդվածը վերաբերվում է պետական մարմինների հետ համագործակցությանը, մասնավորապես՝ ա) Հանձնաժողովն իրավունք ունի դիմել պետական մարմիններ՝ իր իրավասությունների շրջանակով պայմանավորված տեղեկություններ ստանալու համար, և բ) Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում մասնակցում է տնտեսական և ֆինանսական ծրագրերի մշակմանը, դրանց վերաբերյալ ներկայացնում առաջարկություններ:


2019թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Մասդար Արմենիա» ներդրումային ծրագրին և սահմանել է նախապայման ծրագրի իրականացման համար, այն է՝ 400 Մվտ գումարային հզորությամբ ֆոտովոլտային կայանների տեղադրում:

2018թ. նոյեմբերի 21-ին ՀԾԿՀ-ն ընդունեց «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013թ. նոյեմբերի 1-ի N 374-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և 2013թ. հոկտեմբերի 2-ի N 339-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշումը: Սույն որոշման դրույթների թվում են նաև Էներգետիկ ոլորտում լիցենզավորման նոր կարգի հաստատումը: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության առաջարկով, ինչպես նաև լիցենզավորման կարգի 35 և 36 կետերի համաձայն ՀԾԿՀ-ն սահմանել է 200 Մվտ առավելագույն հզորություն Էլեկտրական Էներգիայի արտադրության գործունեության նպատակով՝ մինչև 5 Մվտ տեղակայվող հզորությամբ արևային Էլեկտրակայաններին 2018թ. նոյեմբերի 2-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տրված լիցենզիայի համար: Վերը նշված լիցենզիան չի տրամադրվում և առաքման սակագին չի սահմանվում, եթե լիցենզիայի տրամադրման արդյունքում արևային Էլեկտրակայանների գումարային հզորությունը գերազանցում է լիցենզավորման կարգի 35 և 36 կետերում նշված գումարային սահմանաչափերը:

Վերը նշված որոշման համաձայն, համապատասխանաբար 30 Մվտ-ը և 5 Մվտ-ը գերազանցող հզորությամբ հողմային և արևային Էլեկտրակայաններում Էլեկտրական Էներգիայի արտադրության լիցենզիաներ տրամադրվում են պետություն-մասնավոր գործընկերության սկզբունքով:

ՀԾԿՀ այլ որոշումները, որոնք կարող են Էական համարվել ներդրումներ ներգրավելու համար, ներառում են Էլեկտրական Էներգիայի առքուվաճառքի պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին որոշումը, ինչը կանոնակարգը ներդրողների համար դարձնում է հստակ և կանխատեսելի:

ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐ ՆԵՐԳՐԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈԼՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱՂՈՒՄ



ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝

2019թ. մայիսի 29-ի թիվ 159-Ն որոշմամբ ՀԾԿՀ-ն սահմանել է մինչև 1 ՄՎտ հզորությամբ և 2018թ. նոյեմբերի 2-ից հետո լիցենզավորված արևային էլեկտրակայանների կողմից 01.07.2019 և 01.07.2020 միջև ընկած ժամանակահատվածում արտադրվող էլեկտրաէներգիայի առաքման նոր սակագին (24,233 դրամ/ կՎտժ՝ առանց ԱԱՀ): Մինչև 1 ՄՎտ (ներառյալ) հզորությամբ և մինչև 2018թ. նոյեմբերի 2-ը լիցենզավորված արևային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը կազմում է 43,585 դրամ/ 1 կՎտժ (առանց ԱԱՀ):

ՀԾԿՀ-ն հաստատել է վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը սահմանելու կարգը (ՀԾԿՀ 2018թ. հոկտեմբերի 24-ի թիվ 396-Ն որոշում): Այս որոշման ընդունման արդյունքում արևային էլեկտրակայանների և հողմակայանների արտադրած էլեկտրաէներգիայի սակագների սահմանումը դարձել է թափանցիկ:

2018թ. ապրիլի 12-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» թիվ 426-Ն որոշումը: 2019թ. հոկտեմբերի 24-ից ուժի մեջ մտած այս կանոնակարգը զգալի ազդեցություն կունենա բնակելի շենքերում էներգախնայողության ոլորտի վրա և շինարարական ընկերություններն ու կառուցապատողները պետք է մեծացնեն տվյալ ոլորտում կատարվող ներդրումների ծավալը:

Նվազեցվել է արևային վահանակների ներկրվող հավաքման մասերի մաքսատուրքը:

2018թ. փետրվարի 7-ին ընդունված «Էներգետիկայի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-100-Ն օրենքով (որը ուժի մեջ է մտել 2018թ. հուլիսի 1-ից) նախատեսվում է էլեկտրական էներգիայի մեծածախ շուկան դարձնել մրցակցային: Սա նախատեսում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի չկարգավորվող հատվածում մրցակցային մեխանիզմների ներդրում, նոր մասնակիցներին (առքուվաճառքով զբաղվողներ և մատակարարներ)՝ առանց որևէ խոչընդոտի մեծածախ շուկա մտնելու հնարավորություն, բաշխման և մատակարարման գործունեության առանձնացում, ինչպես նաև ներմուծման արտոնագրային ռեժիմի չեղարկման արդյունքում հարևան երկրներից ավելի էժան էլեկտրաէներգիա ներկրելու հնարավորություն: ՀԾԿՀ-ն պետական գերատեսչությունների հետ համատեղ մշակել է էլեկտրական էներգիայի մեծածախ շուկայի նոր մոդելը, որտեղ ներդրվել են նորմատիվային նոր գործիքներ՝ 1) սպառողների իրավունքների պաշտպանության, 2) արտադրողների և սպառողների միջև պատասխանատվության արդարացի բաշխման համար, ինչպես նաև այլ հիմնական սկզբունքներ:


2019թ. դեկտեմբերի 25-ին ՀԾԿՀ-ն ընդունեց «Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները հաստատելու մասին» թիվ 516-Ն որոշումը, որն ուժի մեջ կմտնի 2021թ. փետրվարի 1-ին: Սույն որոշմամբ անվավեր են ճանաչվել նախկին, ժամանակավոր կանոնները: Որոշումը թույլ է տալիս պարզեցնել էլեկտրական էներգիայի շուկայի կանոնները՝ շուկան դարձնելով առավել թափանցիկ: Արդյունքում, 2021թ. -ին ՀԾԿՀ-ն ձեռնամուխ կլինի պայմանագրերի նոր օրինակելի ձևերի, էլեկտրա էներգետիկ համակարգի և բաշխման ցանցի վերաբերյալ օրենքների մշակմանը և կկատարի այլ փոփոխություններ գործող կանոնակարգերում, որոնց անհրաժեշտությունը կբխի են շուկայի նոր մոդելից:

ԷՆՈԳ-ի 2017 հրատարակում

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՈՐՏ 1

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ԳՏՎՈՂ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՊԱՏԵԱԾ ԿԱՏԱՐՈՒՄ








ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝

2017թ. մայիսի 17-ին ՀԾԿՀ-ն ընդունել է թիվ 161-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության ԷլեկտրաԷներգետիկական համակարգի ցանցային կանոնները, ՀՀ ԷլեկտրաԷներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ժամանակավոր ցուցանիշները հաստատելու, ՀՀ ՀԾԿՀ-ի մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին (այսուհետ՝ Ցանցային կանոններ): Սույն որոշումն ուղղված է երկրի Էլեկտրական ցանցերի հուսալիության ու անվտանգության արդիականացմանն ու բարձրացմանը, ինչպես նաև երկարաժամկետ պլանավորման գործընթացի կատարելագործմանը:

2018թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ՀԾԿՀ-ն ընդունել է «Բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում Էլեկտրական Էներգիայի առաքման և ԷլեկտրաԷներգիայի առքուվաճառքի (օրենքով գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ հզորությամբ տեղակայված կայանում Էլեկտրական Էներգիա արտադրող-բաշխող (երաշխավորված մատակարար)) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 456-Ն որոշումը:

Աղյուսակ 4. Բարելավման նպատակով՝ յուրաքանչյուր ոլորտի մասով առաջարկությունների կատարման կարգավիճակի բացատրական աղյուսակ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ
Առաջարկությունը իրականացվել է	Այս կարգավիճակը ցույց է տալիս Նշված առաջարկությունների ամբողջական կատարումը: Սա նշանակում է, որ առաջարկությունների կատարումը նպաստել է ակնկալվող արդյունքների հասնելու և ընդհանուր առմամբ բարելավել է վիճակը տվյալ ոլորտում:	
Կատարումն ընթացքի մեջ է	Այս կարգավիճակը ցույց է տալիս, որ կամ որոշակի առաջարկությունների առանձին տարրեր են ամբողջությամբ կատարվել կառավարության կողմից, կամ ներկայումս տեղի են ունենում առարկությունների ամբողջական կատարմանն ուղղված գործողություններ:	
Էական փոփոխություններ չեն նկատվում	Որևէ առաջարկության կատարմանն ուղղված որոշակի ոչ մի գործողություն չի իրականացվել, և ամկա իրավիճակը նույնն է կամ շատ նման է հրապարակման պահին եղած իրավիճակին:	
Հակառակ գործողություններն են կատարվում	Կառավարությունը նախաձեռնել և/կամ արդեն իրականացրել է գործողությունների առանձին տարրեր, որոնք, ինչպես ենթադրվում է, այլ ազդեցություն կունենան և կարող են արդյունքների հանգեցնել՝ ի հակառակ որոշակի առաջարկության:	
Հակառակ գործողություններ են իրականացվել	Այս կարգավիճակը ցույց է տալիս գործողությունների ամբողջական իրականացում, որն ամբողջովին հակառակ ազդեցության է հանգեցրել՝ որոշակի առաջարկության համեմատ:	

Վերլուծության մեթոդաբանությունը

Սույն վերլուծության նպատակն է հետևել 2017թ. ԷՆՌԳ-ի Հայաստանի ընդլայնված բնութագրում և 2018թ. ԷՆՌԳ-ի տիպական զեկույցում Հայաստանի վերաբերյալ բնութագրում ներկայացված առաջարկությունների կատարմանը: Այն հիմնված է Հայաստանի Էներգետիկ ոլորտին և ներդրումների միջավայրին վերաբերող նորմատիվաիրավական բազայի ուսումնասիրության, ինչպես նաև համապատասխան հետազոտության արդյունքների հիման վրա: Այս նպատակով կազմվել է համապատասխան հարցաշար և 55 շահագրգիռ կողմերի առաջարկվել է լրացնել այն: Ստացվել է լրացված 9 հարցաթերթիկ և անցկացվել է հեռախոսային 2 հարցազրույց Էներգետիկ ոլորտի ընկերությունների հետ: 3 հարցաթերթիկ լրացվել է ոլորտին ամենօրյա նախարարությունների կողմից, 1 հարցաթերթիկ՝ կարգավորող անկախ մարմնի կողմից և մեկական հարցաթերթիկ՝ միջազգային կազմակերպության, տեղական ՀԿ-ի, Էներգետիկ ոլորտում մասնագիտացած խորհրդատվական ընկերության, անդրազգային գազամատակարարող ընկերության տեղական մասնաճյուղի և իրավաբանական ընկերության կողմից:

ԷՆՌԳ-ի 2017 և 2018 թվականների հրատարակումներում նշված առաջարկների կատարման վերլուծության մեթոդաբանությունը մշակվել է Էներգետիկ խարտիայի քարտուղարության ներդրումների բաժնի կողմից և հիմնված է զեկույցի հեղինակների միջև ներքին քննարկումների արդյունքների վրա: Այս մեթոդաբանության հիմնական նպատակն է գնահատել յուրաքանչյուր հանձնարարականի / առաջարկվող բարելավման ոլորտի հետ կապված ցուցումների կատարման գործում կառավարությունների արձանագրած առաջընթացը: Ոլորտի բարելավման յուրաքանչյուր առաջարկի իրականացման առաջընթացը գնահատվել է վերահսկիչ 5 ցուցանիշների համաձայն: Այս ցուցանիշները ներկայացնում են կատարման ներկայիս կարգավիճակը: Բարելավման յուրաքանչյուր ոլորտի համար եզրակացության հիմք հանդիսացող արդյունքները ստացվել են գրասենյակային պայմաններում ուսումնասիրություններից, ինչպես նաև շահագրգիռ կողմերից տրամադրած տվյալներից: Սահմանվել են կատարման հետևյալ 5 կարգավիճակները.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Աղյուսակ 2. Հայաստանի էներգետիկ ոլորտում ներդրումների 3 տեսակ ռիսկերի գնահատում

ՌԻՍԿԱՅԻՆ ՈԼՈՐՏ	2018	2019
Անկանխատեսելի քաղաքականություն և նորմատիվային բազայի փոփոխություն	29	29
Օտարերկրյա և հայրենական ներդրողների միջև խտրականություն	22	22
Պետական պարտավորությունների խախտում	18	18

Աղբյուր՝ ԷՆՈԳ 2018, ԷՆՈԳ 2019

Աղյուսակ 3. Հայաստանի կատարողականը ԷՆՈԳ ցուցանիշների համեմատ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2018	2019
ՑՈՒՑԱՆԻՇ 1. ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԲԱԶԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	62	63
Ենթացուցանիշ 1.1. Տեսլականի և քաղաքականությունների փոխանցում	82	82
Ենթացուցանիշ 1.2. Քաղաքականության նպատակների և պարտավորությունների կայունություն	41	44
ՑՈՒՑԱՆԻՇ 2. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	70	70
Ենթացուցանիշ 2.1. Ինստիտուցիոնալ կառավարում	56	56
Ենթացուցանիշ 2.2. Թափանցիկություն	83	83
ՑՈՒՑԱՆԻՇ 3. ՆՈՐՄԱՏԻՎԱԿԱՆԱԿԱՆ ԲԱԶԱ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	81	81
Ենթացուցանիշ 3.1. Նորմատիվային բազայի արդյունավետություն	72	72
Ենթացուցանիշ 3.2. ՕՈւՆ-ի հետ կապված սահմանփակումներ	90	90
ՑՈՒՑԱՆԻՇ 4. ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	82	82
Ենթացուցանիշ 4.1. Ներդրող-պետություն վեճերի կառավարում և կարգավորում	80	80
Ենթացուցանիշ 4.2. Սեփականության իրավունքը հարգելը	83	83

Աղբյուր՝ ԷՆՈԳ 2018, ԷՆՈԳ 2019

Էներգետիկ ոլորտում ներդրումային միջավայրը բարելավելու և ռիսկերը սկզբեցնելու վերաբերյալ ԷՆՌԳ-ի առաջարկությունները

«ԵՄ-ն հանուն Էներգետիկայի կառավարման» ծրագրի շրջանակներում 2017 թ.-ին Էներգետիկ խարտիայի քարտուղարությունը կազմել էր ԷՆՌԳ-ի՝ Հայաստանի ընդլայնված բնութագիրը:

Պարզվել է, որ օտարերկրյա և հայրենական ներդրողների միջև խտրականության ռիսկը համեմատաբար ցածր է: Երկրի կատարողականի (ընդհանուր միավորը գնահատվել է 87,2) գնահատումը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 1. 2017թ. ԷՆՌԳ-ի՝ Հայաստանի վերաբերյալ ընդլայնված բնութագրում
նշված չորս հիմնական ցուցանիշների գնահատում**

Հիմնական Ցուցանիշ 1. Էներգետիկ ոլորտի վերաբերող քաղաքականության առաջնահերթ խնդիրների և հստակ նպատակների առկայություն		Հիմնական Ցուցանիշ 2. Քաղաքականության սեպարատ գործընթացների կառավարում		Հիմնական Ցուցանիշ 3. Շուկայի գործողություններ, սակավոր չափերի կառավարում և կառավարողների վերաբերողություններ		Հիմնական Ցուցանիշ 4. Օրենքի գերազանցություն	
ԵնթաՑուցանիշներ	Միավոր	ԵնթաՑուցանիշներ	Միավոր	ԵնթաՑուցանիշներ	Միավոր	ԵնթաՑուցանիշներ	Միավոր
Էներգետիկ ոլորտի վերաբերող քաղաքականության առաջնահերթ խնդիրների և հստակ նպատակների առկայություն	-	Ինստիտուցիոնալ կառավարում	87.2	Նորմատիվային բազայի արդյունավետություն	100	Պայմանագրերի կատարման ապահովում, ներքին վեճերի կարգավորում և ՆԴԿԿ ¹	79.4
Նպատակների կայունություն	80.5	Թափանցիկություն	74.3	ՕՈՒՆ-ի հետ կապված սահմանափակումներ	85.7	Սեփականության իրավունքը հարգելը	100
Նպատակներն իրականացնելու հարցում վստահություն	90.2						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ	85.4	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ	80.7	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ	92.9	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ	89.7

Աղբյուրը՝ 2017թ. ԷՆՌԳ-ի՝ Հայաստանի վերաբերյալ ընդլայնված բնութագիր

2018թ. և հետագա հրատարակումներում փոքր-ինչ փոփոխվել է ԷՆՌԳ հաշվետվության մեթոդաբանությունը, իսկ որոշ ցուցանիշներ փոփոխվել կամ թարմացվել են: Այս առումով 2017թ. և հաջորդ հրատարակումների համար նախատեսված միավորները համադրելի չեն:

ԷՆՌԳ-ի 2018 և 2019թթ. հրատարակումներում ռիսկերի մակարդակը բոլոր 3 ոլորտների դեպքում մնացել է համեմատաբար ցածր:

Միաժամանակ, ցուցանիշների ընդհանուր միավորները Հայաստանի դեպքում 2018 և 2019թթ. արձանագրել են մի փոքր աճ:

1 Ներդրող-պետություն վեճի կարգավորում

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) հաստատում է սակագների սահմանման և վերանայման կարգը: Համաձայն օրենսդրության, ՀԾԿՀ-ն կարող է սահմանել սակագնի որոշակի դրամական արժեք կամ սակագնի հաշվարկման հստակ բանաձև՝ ելնելով «Էներգետիկայի մասին» ՀՀ կարգավորվող պարամետրերից: «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն սակագինը պետք է ներառի

Շահագործման և սպասարկման հիմնավորված ծախսեր

Վարկերի սպասարկման ծախսեր

Բնապահպանական նորմերի պահպանմանն ուղղված ծախսեր

Էներգատեղակայանքների կոնսերվացման և պահպանման ծախսեր

Օգտագործված միջուկային վառելիքի անվտանգ պահպանման ծախսեր և ատոմակայանը շահագործումից հանելու հիմնադրամին անհրաժեշտ հատկացումների ապահովում

Տեխնիկական և առևտրային կորուստներ

Օրենսդրությամբ նախատեսված այլ հիմնավորված ծախսեր

Սակագինը պետք է նաև օպերատորին ողջամիտ շահույթ ստանալու հնարավորություն ապահովի: Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ ՀԾԿՀ-ն կամ լիցենզառուն կարող են սակագնի վերանայման հայտ ներկայացնել: Հայտը ներկայացնելուց հետո սակագինը պետք է վերանայվի 90 օրվա ընթացքում: ՀԾԿՀ-ն իրավասու է սահմանել երկարաժամկետ սակագին՝ ավելի քան վեց ամիս ժամկետով, եթե դա անհրաժեշտ համարվի ներդրումային անվտանգության համար: Սակագինը սահմանելուց հետո լիցենզառուները չեն կարող բողոքարկել սակագնի մեծությունը: Սահմանված սակագինը փոխելու միակ միջոցը ՀԾԿՀ-ի սակագնային մեթոդաբանության դեմ խնդրագրի ներկայացումն է:

Հայաստանն ունի արևային Էներգիայի զգալի ներուժ: Մեկ քառակուսի մետր հորիզոնական մակերևույթի վրա արևային Էներգիայի հոսքի տարեկան միջին արժեքը կազմում է մոտավորապես 1720 կՎտժ (Եվրոպայում միջինը 1000 կՎտժ է): Երկրի տարածքի մեկ քառորդն ունի տարեկան 1850 կՎտժ/մ² հզորությամբ արևային Էներգիայի պաշարներ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը նախատեսում է կառուցել արդյունաբերական մասշտաբի՝ 110 ՄՎտ հզորությամբ արևային կայաններ: ՀՀ Կառավարությունը քայլեր է ձեռնարկել զարգացնելու երկրի երկրաչերմային ռեսուրսները:

Հայաստանն ունի ապացուցված փորձ ֆոտովոլտային (ՖՎ) տեխնոլոգիաների ոլորտում և ՖՎ ողջ շղթան տեղական ուժերով զարգացնելու զգալի հնարավորություններ:

ՀՀ Կառավարությունը նախատեսում է կառուցել նոր ատոմային էլեկտրակայան և փոքր մոդուլային ռեակտորների նկատմամբ հետաքրքրություն է ցուցաբերել:

Ներդրումային միջավայր

Համաշխարհային ներդրումների մասին ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման խորհրդաժողովի (ՄԱԱՀԽ) 2019թ. զեկույցի համաձայն, 2018թ. Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՌԻ-Ն) ներհոսքի ծավալներն ավելացել են, հասնելով 254 մլն ԱՄՆ դոլար, ինչը 2017 թվականի համեմատ (250 մլն ԱՄՆ դոլար) փոքր-ինչ աճել է : Ռուսաստանը, Հունաստանը, Կիպրոսը և Գերմանիան Հայաստանում չորս խոշոր ներդրողներն են, թեև զգալի ներդրումներ են կատարվում նաև հայկական սփյուռքի (մոտավորապես 6 միլիոն մարդ) ներկայացուցիչների կողմից: Օտարերկրյա ուղղակի ներդրումների հիմնական ոլորտներն են Էներգետիկան, հեռահաղորդակցությունը, մետալուրգիան, հյուրանոցային ծառայություններն ու օդային փոխադրումները: Կուտակված օտարերկրյա ուղղակի ներդրումները 2018 թ.-ին գնահատվել են 5,5 մլրդ ԱՄՆ դոլար (ՄԱԱՀԽ):


Ներդրումների ներգրավման միջոցառումների թվում է բարձր տեխնոլոգիաների ճյուղի համար ազատ տնտեսական գոտիների ստեղծումը, ինչը ընկերություններին ապահովում է արտոնյալ պայմաններ շահութահարկի, ԱԱՀ-ի, գույքահարկի և մաքսատուրքի մասով:

իրավիճակը բարդացնում է նաև այն փաստը, որ զարգացած երկրների համեմատ Հայաստանն ունի Էներգետիկ արդյունավետության շատ ցածր մակարդակ: Այդ իսկ պատճառով կառավարությունն ընդունել է մի շարք օրենքներ, որոնք ուղղված են ներքին, հատկապես վերականգնվող, Էներգետիկ ռեսուրսների զարգացմանը և Էներգահսնայողության միջոցառումների համատարած իրականացմանը:

Հայաստանում ԷլեկտրաԷներգիան արտադրվում է մեկ ատոմային Էլեկտրակայանի, մի քանի խոշոր հիդրոԷլեկտրակայանների, ջերմաԷլեկտրակայանների և Էներգիայի վերականգնվող աղբյուրների վրա հիմնված արտադրական հզորությունների միջոցով: 2015 թ.-ին երկրի բաշխիչ ցանցերը և մանրածախ ընկերությունը՝ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, որն այն ժամանակ պատկանում էր «Իստեր ՌԱՕ»-ին, վաճառվեց «Տաշիր» ընկերությունների խմբին: Վերջինս հայտարարել էր, որ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցության արդյունքում առաջիկա մի քանի տարիների ընթացքում ցանցի ենթակառուցվածքների արդիականացման համար կներդնի շուրջ 900 մլն դոլար:

Հայաստանի բարձրավիճակով Էլեկտրացանցերը պետական մենաշնորհ է, որը գործում է որպես փակ բաժնետիրական ընկերություն: Դրա հիմնական նպատակը 220-110 կՎ Էլեկտրական ցանցերի միջոցով ԷլեկտրաԷներգիայի անվտանգ հաղորդման ապահովումն է, այդ թվում՝ սպասարկում, վերակառուցում, վերազինում և նախագծային աշխատանքներ, ինչպես նաև ցանցի ընդլայնումը Էներգետիկ օբյեկտների և բարձրավիճակով Էլեկտրահաղորդման գծերի հաշվին:

Հայաստանի ԷլեկտրաԷներգետիկական շուկայի սխեմա



Որպես անկախ օպերատոր՝ «ԷլեկտրաԷներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն ունի Էներգահամակարգի ռազմավարական գործունեության մենաշնորհ: Ընկերությունը պատասխանատու է ԷլեկտրաԷներգետիկական համակարգի կարճաժամկետ պլանավորման, կարգավարական և գործառնական կառավարման համար: Էլեկտրահաղորդման ցանցի և այլ գործառնայինների զարգացման պլանավորումը հիմնված է շուկայական մոտեցման վրա: ԷլեկտրաԷներգիայի շուկայի օպերատորի գործառնայիններն իրականացնում է «Հաշվարկային կենտրոնը», որը պատասխանատու է ԷլեկտրաԷներգիայի մեծածախ շուկայի կազմակերպման, ԷլեկտրաԷներգիայի (հզորության) հաշվառման ավտոմատացված համակարգի վերահսկողության և տեխնիկական սպասարկման, ԷլեկտրաԷներգիայի մեծածախ շուկայի շրջանակներում կնքված պայմանագրերին համապատասխան ԷլեկտրաԷներգիայի առևտրային հաշվառման, ինչպես նաև ԷլեկտրաԷներգիայի արտահանման կամ ներմուծման պայմանագրերի, մեծածախ շուկայի մասնակիցների և ծառայություններ մատուցողների համար փաստաթղթերի պատրաստման և ներկայացման, ինչպես նաև շուկայի կանոններով նախատեսված այլ գործառնայիններ:

Վերջին քաղաքական գարգացումները

2018թ. խորհրդարանական ընտրություններից հետո ձևավորվեց նոր կառավարություն, իսկ 2019թ. փետրվարին խորհրդարանը հավանություն տվեց կառավարության նոր հնգամյա ծրագրին: Կառավարությունը ստանձնել էր լավ կառավարման նոր պարտավորություն, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ պայքար, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Տնտեսական իրավիճակը

2017 և 2018թթ.-ին գրանցված կայուն տնտեսական աճը (համապատասխանաբար 7,5 և 5,2%) 2019թ.-ին շարունակվեց և հասավ 7,6%:

Արտաքին և ներքին ինֆլյացիոն ճնշումների պարագայում միջին տարեկան գնաճը 2018թ.-ին 2,5%-ից նվազել է մինչև 1,4% 2019թ.-ին, ինչը ցածր է ՀՀ Կենտրոնական բանկի նպատակային միջակայքից (4% +/- 1.5%):

Համաշխարհային բանկի «Doing Business 2020»-ի վարկանիշում Հայաստանը գտնվում է 47-րդ տեղում («Doing Business 2019»-ի համեմատ 6 կետով նվազել է), «Սկսել բիզնես» կատեգորիայում ամենաբարձրը՝ 10-րդ դիրքում (2019թ.-ի համեմատ 2 կետով նվազել է) և ամենացածրը՝ 120-րդ դիրքում, փոքր ներդրողների պաշտպանության կատեգորիայում:

«Թրանսփարենսի հնթերնեյշնլ» կենտրոնի կոռուպցիոն ընկալման համաթվում Հայաստանը զբաղեցնում է 105-րդ հորիզոնականը (Ալժիրի, Բրազիլիայի, Կոտ դ'Իվուարի, Եգիպտոսի, Պերուի, Արևելյան Թիմորի և Չամբիայի հետ միասին):

2019 թ.-ին «Moody's Investors Service» («Moody's») վարկանիշային գործակալությունը բարձրացրել է Հայաստանի կառավարության պարտքի չապահովված պարտավորությունների և պարտքի չապահովված գերակա պարտավորությունների երկարաժամկետ թողարկողի՝ ազգային արժույթով և արտարժույթով վարկանիշը B1 մակարդակից մինչև Ba3:

Էներգետիկ ոլորտը

1990-ական թվականների ծանր ճգնաժամից հետո Հայաստանի Էներգետիկ ոլորտը համեմատաբար կայունացավ: Քաղաքականության, իրավական, նորմատիվային և ինստիտուցիոնալ բարեփոխումները լավ արդյունք տվեցին: Շահագործման արդյունավետության բարձրացումը, ինչպես օրինակ՝ տեխնիկական և ոչ տեխնիկական կորուստների նվազումն ու վճարումների գրեթե 100%-ոց հավաքագրումներն օգնեցին առևտրային տեսանկյունից կենսունակ ծառայություններ մատուցողների ստեղծմանը: Այդուհանդերձ, Էներգամատակարարման, սուբսիդավորման և կառավարման հետ կապված խնդիրները շարունակում են մնալ չլուծված:

Էներգետիկ ոլորտում Հայաստանը երեք գլխավոր խնդրի առաջ է կանգնած՝ (1) երևացող մատակարարման բացերը, (2) Էներգիայի մատակարարման հուսալիության պահպանման անհրաժեշտությունը, և (3) մատչելի սակագների պահպանման անհրաժեշտությունը: Հայաստանն ունի սահմանափակ Էներգետիկ ռեսուրսներ և կարող է բավարարել ներքին ռեսուրսներից Էներգիայի ընդհանուր պահանջարկի շուրջ 35 %:

Հայաստանը չունի հաստատված նավթի կամ բնական գազի պաշարներ, ուստի խիստ կախված է ներկրվող Էներգառեսուրսներից: Այն նավթ և նավթամթերք է ներմուծում Վրաստանից, Իրանից, Ռուսաստանից և Եվրոպայից: Բնական գազը Ռուսաստանից ներկրվում է Վրաստանով (Իրանից սահմանափակ քանակությամբ բնական գազ է ներմուծվում ԷլեկտրաԷներգիայի դիմաց փոխանակման սկզբունքով), իսկ միջուկային վառելիքը ներկրվում է Ռուսաստանից:

ՎԵՐՋԻՆ ՀԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐՈՒՄ



ԷՆՌԳ-ի մասին

ԷՆՌԳ-ն Էներգետիկ խարտիայի քարտուղարության (ԷԽՔ) կողմից հրապարակված փաստաթուղթ է, որը գնահատում է Էներգետիկ ներդրումների վրա ազդող որոշակի ռիսկերը, որոնք կարող են մեղմվել քաղաքականության, նորմատիվ իրավական դաշտի կարգավորման միջոցով: Այն ուղղված է քաղաքականության բացերի հայտնաբերմանը, ուսուցման հնարավորությունների տրամադրմանը և բարեփոխումների խթանմանը, ինչի արդյունքում երկրների ներդրումային միջավայրերը դառնում են առավել դիմացկուն և նվազեցնում են ներդրող-պետություն վեճերի առաջացման ռիսկը: Հաշվետվության արդյունքները ներկայացված են առանձին երկրների ռիսկերի բնութագրի (պրոֆիլի) տեսքով: Նշված բնութագրերում պարունակվող տեղեկատվությունը ստացվել է երկրների կառավարություններից և Էներգետիկայի ոլորտի հրավիրված փորձագետներից: Յուրաքանչյուր երկրի հիմնական ուժեղ կողմերն ու բարելավման ենթակա ոլորտները նշելուց բացի կրկին մասնակցող երկրների մասին տեղեկությունները ներառում են մեկ տարվա կտրվածքով համեմատության աղյուսակը:

Էներգետիկայի ոլորտում ներդրումային ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը մշակվել է 2017թ.-ին և այն հիմք է հանդիսացել ԷՆՌԳ-ի 2018թ. հաշվետվության համար: 2018թ. հաշվետվության մեթոդաբանությունը Էական փոփոխություններ չի պարունակել, թեպետ հաշվի են առնվել 2017թ. հաշվետվության վերաբերյալ ստացված բոլոր դիտողությունները: Արդյունքում կատարվել են մեթոդաբանական բարելավումները, այդ թվում՝ ա) ավելի մեծ թվով երրորդ կողմերի ներգրավում, ինչը թույլ տվեց հետազայում հակազդել ինքնագնահատման ընկալմանը և խուսափել գնահատականների բացառիկ արժեքներից, բ) փաստերի վրա հիմնված միասնական հարցաշար. այս երկու հարցաշարերը միավորվել են մեկ միասնական հարցաթերթիկում՝ ինչպես կառավարության, այնպես էլ երրորդ կողմերի համար և դարձել են փաստերի վրա հիմնված հարցեր, գ) կատեգորիաների պատկերավոր ցուցադրում. ԷՆՌԳ 2018թ. հաշվետվության մեջ կիրառվել է հինգ կատեգորիա, որոնք նշվել են համապատասխան գույներով՝ երկրներն ըստ իրենց կատարողականի ենթացուցանիշների, հիմնական ցուցանիշների և ռիսկի ընդհանուր մակարդակի դասակարգելու համար: Դասակարգումը հետևյալն է՝

ԷՆՌԳ-ն վերլուծում է ռիսկերի երեք ոլորտ.

Քաղաքականության և նորմատիվային բազայի անկանխատեսելի փոփոխություններ

Տեղական և օտարերկրյա ներդրողների միջև խտրականություն

Պետության պարտավորությունների խախտում

Նշված ոլորտներից յուրաքանչյուրի ռիսկի մակարդակը հաշվարկելու համար ընտրվել է չորս ցուցանիշ: Դրանք են՝

Քաղաքականության և նորմատիվային բազայի փոփոխությունների կանխատեսում

Որոշումների կայացման գործընթացների կառավարում

Նորմատիվ իրավական բազա և ներդրումային պայմաններ

Օրենքի գերակայություն (ազգային և միջազգային պարտավորությունների կատարում)

Այս ցուցանիշներից յուրաքանչյուրն ունի երկու ենթացուցանիշ, որոնց գնահատման հիմքում դրված են գործնական հարցերի վավերացված պատասխանները:

ԷՆՌԳ-ի մեթոդաբանության ամբողջական տարբերակը, ներառյալ ցուցանիշների կատարողականի նկարագրությունը, ինչպես նաև ԷՆՌԳ-ի 2018-2020թթ. հարցաշարերը հասանելի է ԷՆՌԳ-ի կայքում <https://eira.energycharter.org>.

ԷՆՌԳ մշտադիտարկման զեկույցի մասին

«ԵՄ-ն հանուն Էներգետիկայի» (ԵՄՀԷ) նախաձեռնության ԷՆՌԳ մշտադիտարկման զեկույցի նպատակն է գնահատել 2017թ.-ին ԵՄՀԷ-ի աջակցությամբ կազմված ԷՆՌԳ-ի՝ Հայաստանի վերաբերյալ ընդլայնված բնութագրում ներկայացված առաջարկությունների կատարման առաջընթացը: Չեկույցը ներառում է կատարված գործողությունների որակական վերլուծություն և առաջարկվող բարելավման ոլորտներում երկրի արձանագրած առաջընթացի գնահատում: Չեկույցը սահմանում է նաև ԷՆՌԳ-ի նախորդ հրատարակումներում նշված՝ երկրների նպատակներին հասնելու համար նախատեսված հետագա քայլերը:

«ԵՄ-ն հանուն Էներգետիկայի» նախաձեռնության մասին


«ԵՄ-ն հանուն Էներգետիկայի» նախաձեռնությունը Արևելյան գործընկերության մասն է: Այս հատուկ նախաձեռնության շրջանակում Եվրոպական Միությունը (ԵՄ) համագործակցում է Արևելյան գործընկերության վեց երկրների (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա), ինչպես նաև Կենտրոնական Ասիայի (Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան և Ուզբեկստան) հետ՝ նպատակ ունենալով բարելավել Էներգամատակարարումը, Էներգետիկ անվտանգությունն ու էլեկտրաֆիկացումը, ինչպես նաև խթանել Էներգաարդյունավետությունն ու տարածաշրջանում վերականգնվող Էներգետիկ ռեսուրսների օգտագործումը: ԵՄ-ն ֆինանսավորում է Էներգետիկ շուկայի բարեփոխումները և կայուն Էներգետիկայի լուծումները խթանող նախագծեր և ծրագրեր, որոնք կօգնեն գործընկեր երկրներին նվազեցնել Էներգետիկ կախվածությունը, դարձնել դրանք առավել դիմացկուն՝ միաժամանակ նվազեցնելով ածխածնի արտանետման իրենց մասնաբաժինը: Երկարաժամկետ հեռանկարում սա Էներգամատակարարումը դարձնում է առավել մատչելի, հուսալի և թափանցիկ, դրանով իսկ նվազեցնելով Էներգետիկ աղքատությունն ու կրճատելով ձեռնարկությունների և մարդկանց սպառած էլեկտրաէներգիայի դիմաց վճարվող հաշիվները:

Սույն զեկույցը կազմվել է Էներգետիկ խարտիայի քարտուղարության (ԷԽՔ) ներդրումների բաժնի և «ԵՄ-ն հանուն Էներգետիկայի» նախաձեռնության Ծրագրի կառավարման գրասենյակի կողմից:

Չեկույցի պատրաստման գործում իրենց փորձագիտական բարձր մակարդակի և արժեքավոր ավանդի համար ԷԽՔ-ն իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին, ընկերություններին և կազմակերպություններին, մասնավորապես ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը, ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակին, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին, «Ամերիա» ՓԲԸ-ին, «Ի Էյ Էներջի Ըղվայգորի» ՍՊԸ-ին, «Շտիգեն» ՍՊԸ-ին և «Հաբիթաթ ֆոր հյումենիթի Արմենիա» հիմնադրամին:

«ԵՄ-ն հանուն Էներգետիկայի կառավարման» ծրագրի շրջանակներում Էներգետիկ խարտիայի քարտուղարությունը համագործակցում է Հայաստանի հետ՝ Էներգաարդյունավետության, Էներգետիկ շուկայի բարեփոխման և ներդրումային միջավայրի բարելավման ոլորտներում երկրի իրավական և օրենսդրական դաշտի ամրապնդման նպատակով: Եվրոպական Միությունում և Արևելյան գործընկերության այլ երկրներում արդյունավետ գործող Էներգետիկ քաղաքականության լավագույն փորձը ծառայում է որպես մոդել, որը Հայաստանում կարող է կիրառվել՝ ելնելով երկրի առանձնահատկություններից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ՎԵՐՋԻՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐՈՒՄ	8
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	38
ՀԵՏԱԳԱ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	41

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

«ԵՄ-ն հանուն Էներգետիկայի» («EU4Energy») նախաձեռնության շրջանակներում, ինչպես նաև ելնելով Էներգետիկ ոլորտում ներդրումային ռիսկերի գնահատման (ԷՌԳ) սկզբունքներից, Էներգետիկ խարտիայի քարտուղարությունը կազմել է Հայաստանի վերաբերյալ ԵՄՀԷ/ԷՌԳ մշտադիտարկման 2020 թվականի սույն զեկույցը: Այն վերլուծում է ԷՌԳ 2017թ. զեկույցի Հայաստանի մասին ընդլայնված բնութագրում տեղ գտած՝ Հայաստանին ներկայացված առաջարկությունների և ցուցումների կատարման ընթացքը, ինչպես նաև 2018թ. զեկույցում, որը հանդիսանում է մեր հիմնական հրատարակության առաջին հրապարակային թողարկումը, նշված՝ Հայաստանում բարելավման ենթակա ոլորտներին: ԷՌԳ-ի միջոցով մենք կառավարություններին տրամադրում ենք իրենց Էներգետիկ ոլորտներում ներդրումային ռիսկերը վերլուծելու և մեղմացնելու աշխատող և արդյունավետ գործիք:

Գնահատված ոլորտների նկատմամբ ռիսկի ընդհանուր մակարդակը Հայաստանում ցածր է: Վերջին մի քանի տարիներին մենք ականատես եղանք որոշակի առաջընթացի՝ շուկայի պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման բնագավառում, ինչպես օրինակ՝ ԷլեկտրաԷներգիայի շուկայի աստիճանական ազատականացումը: Այդուհանդերձ, օրակարգում դեռ կան մի շարք լուրջ ծրագրեր, այդ թվում՝ ներդրումների դյուրացման համապարփակ ծրագրի և Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի նոր ազգային ծրագրի մշակումը: Կարծում եմ, որ Հայաստանը կշարունակի հետամուտ լինել օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը և Էներգետիկ ոլորտում ներդրումային ռիսկերի նվազեցմանն ուղղված բարեփոխումներին:

Հուսով եմ, որ Հայաստանի վերաբերյալ ԵՄՀԷ/ ԷՌԳ-ի 2020թ. մշտադիտարկման սույն զեկույցը կծառայի քաղաքականությունը մշակողներին որպես ուղեցույց՝ երկրի Էներգետիկ ոլորտում ներդրումների խթանմանն ուղղված համապատասխան քաղաքականությունների և ռազմավարությունների հետագա կատարելագործման համար:



Դկտ. Ուրբան Ռունսակ

Էներգետիկ խարտիայի քարտուղարության գլխավոր քարտուղար
Բրյուսել, օգոստոս 2020թ.

Պատասխանատվությունից հրաժարման վերաբերյալ հայտարարություն

Սույն զեկույցը պատրաստվել է Եվրոպական Միության աջակցությամբ՝ «ԵՄ-ն հանուն Էներգետիկայի» («EU4Energy») նախաձեռնության շրջանակներում: Չեկույցի բովանդակությունը սույն փաստաթղթի հեղինակ(ներ)ի կամ դրանում այլ ներդրում ունեցող անձանց բացառիկ պատասխանատվության ներքո է և ոչ մի կերպ չի կարող դիտվել որպես Եվրոպական Միության, Էներգետիկ խարտիայի քարտուղարության և Էներգետիկ խարտիայի պայմանագիրը ստորագրող կողմերի, միասին կամ առանձին վերցված, տեսակետները արտացոլող փաստաթուղթ:

Սույն զեկույցում պարունակող տեղեկությունները ստացվել են ենթադրաբար հավաստի աղբյուրներից: Այնուամենայնիվ, Էներգետիկ խարտիայի քարտուղարությունը չի երաշխավորում կամ այլ կերպ ներկայացնում սույն փաստաթղթում հրապարակված որևէ տեղեկատվության ճշգրտությունը կամ ամբողջականությունը: Էներգետիկ խարտիայի քարտուղարությունը պատասխանատվություն չի կրում տեղեկատվության օգտագործման կամ դրանում առկա որևէ սխալի կամ բացթողման հետևանքով պատճառված վնասի կամ կորստի համար: Սույն զեկույցը (1) հրապարակվում է հաշվի առնելով այն, որ Էներգետիկ խարտիայի քարտուղարությունը տրամադրում է տեղեկատվություն, այլ ոչ թե փորձում է մատուցել իրավաբանական կամ այլ մասնագիտական ծառայություն, և (2) որևէ կերպ չպետք է դիտվի որպես աշխատանքային փաստաթուղթ, որը նախատեսված է բիզնես կամ կոմերցիոն նպատակներով որոշումներ կայացնելիս օգտագործելու կամ դրա վրա հիմնվելու համար: Սույն զեկույցի ցանկացած կիրառում սահմանված սահմանափակումների շրջանակից դուրս իրականացվում է բացառապես շահագրգիռ օգտագործողի պատասխանատվությամբ:

Սույն զեկույցի վերարտադրումը կամ պահումը թույլատրվում է բացառապես այն դեպքերում, եթե նշվում է աղբյուրը: Մնացած դեպքում բոլոր իրավունքները պաշտպանված են:

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԽԱՐՏԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ

ISBN 978-905948-220-3 (անգլերեն, printed)

ISBN 978-905948-221-0 (անգլերեն, pdf)

Թողարկման համար՝ D/2020/7850/2

Հեղինակային իրավունք © Էներգետիկ խարտիայի քարտուղարություն, 2020թ.

Բոլոր իրավունքները պաշտպանված են



EU4Energy



EIRA

ENERGY INVESTMENT RISK ASSESSMENT

2020

ԷՆՈՒ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



COMMON RULES FOR **GLOBAL ENERGY SECURITY**



Ֆինանսավորվել է Եվրոպական Միության «ԵՄ-ն հանուն Էներգետիկայի»
նախաձեռնության շրջանակներում



EU4Energy



EIRA

ENERGY INVESTMENT RISK ASSESSMENT

2020

ԷՆՈԳ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

 *COMMON RULES FOR GLOBAL ENERGY SECURITY*



Ֆինանսավորվել է Եվրոպական Միության «ԵՄ-ն հանուն Էներգետիկայի»
նախաձեռնության շրջանակներում